

Յ Ո Ւ Յ Ա Կ Ն Կ Ա Ր Ն Ե Ր Ո Ւ

Էջ 202ա

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Մտնդ. Ս. Ղազարու, Ձեռ. ք. 400:
Շարական ԽԹ, գրուած 1652ին, Կ.
Պոլիս. գրիչ՝ Յակոբ Կամենցի սար-
կաւագ:

Էջ 220ա

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Նկարիչ Ռուսիկեան Հրաչեայ Լ.—
Ծնած Լենինական, 1915ին: Աւար-
տած է Վրաստանի գեղարուեստի Ա-
կադեմիան 1941ին: Կը մասնակցի
գեղարուեստական բազմաթիւ ցու-
ցահանդէսներու, 1945էն ի վեր:

Էջ 236ա

ԽՈՐԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԻ

Մտնդ. Ս. Ղազարու, Ձեռ. ք. 1635:
Աւետարան Ս. Ներսէս Լամբրոնաց-
ւոյ, գրուած 1193ին, Սկեւռայ վան-
քին մէջ: Մանրանկարիչ Կոստանդին
Սկեւռացի:

Էջ 252ա

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Նկարիչ Մնացականեան Ռաֆայէլ
Ս.— Ծնած Երեւան, 1920ին: Աւար-
տած է Երեւանի Փ. Թերլեմեզեանի
անուան գեղարուեստական ուսում-
նարանը, 1939ին: Նուիրուած է գե-
ղանկարչութեան: 1940էն ի վեր կը
մասնակցի ցուցահանդէսներու:

Էջ 268ա

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Մտնդ. Ս. Ղազարու, Ձեռ. ք. 751:
Շարական ՀԵ, գրուած 1476ին: Կը
ներկայացնէ Թարգմանչաց տօնի շա-
րականը, «Որք զարդարեցին», Ս.
Մեսրոպ Վարդապետի նկարով:

Էջ 284ա

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Նկարիչ Հերքեւցեան Շանք Կ.—
Ծնած Լենինական, 1922ին: Աւար-
տած է Երեւանի Պետ. Գեղարուես-
տա-քատերական Հաստատութիւնը,
1950ին: Գեղանկարիչ: Նուիրուած
շարադրական նկարի եւ դիմանկարի
ասպարէզին՝ 1950էն ի վեր կը մաս-
նակցի ցուցահանդէսներու:

Էջ 292ա

ԱԻԵՏԱՐԱՆԻԶ

Մտնդ. Ս. Ղազարու, Ձեռ. ք. 1144,
Աւետարան Մլֆէի, գրուած 902 թը-
ւականին:

Էջ 300ա

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Նկարիչ Սոսոյեան Միքիան Ռ.—
Ծնած Երեւան, 1928ին: Աւարտած է
Երեւանի Պետ. Գեղարուեստա-քա-
տերական Հաստատութիւնը, 1954ին:
1956էն ի վեր կը մասնակցի ցուցա-
հանդէսներու:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

PRIX DE L'ABONNEMENT ANNUEL

Խաղիկոյ համար . . .	3500 Լիր
Արտասահմանի համար . . .	8 Դոլար
Մէկ թիւը՝ 250 լիր . . .	0,50 Դոլար

Pour l'Italie . . .	3500 Lires
Pour l'Etranger . . .	8 Dollars
Le Numéro: 250 Lires - 0,50 Dollars	



ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ

Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600ամեակը յաւերժացրնելու նպատակով, Մխիթարեան տպարանէն լոյս պիտի տեսնէ Ս. Ղազարու Մատենադարանի ձեռագիրներու մանրանկարներուն գումատիպ հրատարակութիւնը, շքեղ ու հարազատ արտատպումներով, յառաջաբանով եւ ուսումնասիրութեամբ:

Ինչպէս ծանօթ է գիտական աշխարհին, Ս. Ղազարու Մատենադարանը հարուստ է հայ մեծանուն մանրանկարիչներու գլուխ-գործոցներով. ունի վասպուրականի, Տրապիզոնի, Հաւուց Թառի, Գլաձորի, Սկեւռայի, Հոռմկլայի, Տաքեւի, Սպահանի, Խրիմու, Լվովի, Պոլսոյ մեծագոյն վարպետներու վրձինով գունագեղուած ոսկեակար սփանչելի էջեր:

Ներկայ հրատարակութեան մէջ, դաբերու եւ նկարչական հոսանքներու յստակ բաժանումներով, պիտի ներկայացուին ընտրելագոյն նմոշները հայկական մանրանկարչութեան, ժ դարէն մինչեւ ժԸ դար, ըստ Արեւելեան Հայաստանի, Կիլիկեան շրջանի եւ հին սփիւռքի մանրանկարչական գանազան դպրոցներու արտադրութեանց: Հոն պիտի յայտնուին Կոստանդին Սկեւռացի, Իգնատիոս մանրանկարիչ, Թորոս Տարօնեցի, Սարգիս Պիծակ, Նաղաշ, եւն... իրենց լաւագոյն գործերով եւ կենսագրական գիծերով:

Հրատարակութիւնը պիտի կատարուի չորս լեզուով. հայերէն, իտալերէն, անգլիերէն եւ ֆրանսերէն: Հատորին ծաւալը պիտի ըլլայ 30-40 հրդմ. 4^o, ընտիր բուրդի վրայ:

Կը խնդրուի ազգային գրադարաններէ, մշակութային Միութիւններէ, ուսումնասէրներէ եւ հետաքրքրուող անհատներէ՝ այժմէն փութալ ապահովցնել օրինակ մը այս բացառիկ հրատարակութենէն, դիմելով Մխիթարեան Տպարանին, վեհնտիկ, Ս. Ղազար: